

Յովհաննէս Պլուզ Երզնկացիի
 «Ի ՏԱՃԿԱՅ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՅ ԳՐՈՑ ՔԱՂԵԱԼ ԲԱՆՔ»ԻՆ
 աղբիւրը՝
 «ՐԱՍԱ՝ԷԼ ԻԽՈՒԱՆ ԱԼ-ՍԱՖԱ»
 رسائل اخوان الصفاء

ՍԵՂԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ – ՏԱՏՈՅԵԱՆ

Հայ փիլիսոփայական մտքի պատմութեան ուսումնասիրութեան մէջ անտեսուած է ընդ որում իսկական ինքնութեան այն «Տաճիկ Իմաստասէրներուն», որոնց դիրքերէն, կամ՝ «թուղթ»երէն քաղուածքներու համառօտ հաւաքածոյ մըն է Յովհաննէս Պլուզ Երզնկացիի «Ի Տաճկաց Իմաստասիրաց Գրոց Քաղեալ Բանք Յովհաննէս Երզնկացին» (1) :

Պլուզը նախորդող երեք դարերու՝ (թ-ժ-ի.) ժամանակաշրջանի չափազանց հարուստ իսլամ փիլիսոփայութեան ժառանգութեան ներկայացուցիչներէն եւ ոչ մէկուն կարելի կ'ըլլայ վճռական

1. Աշխատասիրութիւնը՝ Ի Տաճկաց Իմաստասիրաց Գրոց Քաղեալ Բանք Յովհաննէս Երզնկացիի, նախարանով, եւ օտար բառերու համար բառարանով մը առաջին անգամ հրատարակութեան յանձնած է Ս. Արեւշատեան, տես՝ Յ. Երզնկացու Իմաստասիրական Ամյայտ Աշխատութիւնը, «Բանբեր Մատենադարանի», հար. Դ., Երեւան, 1958, էջ 297-315:

կերպով վերադրել «Ի Տաճկաց Իմաստասիրաց...»ին մէջ ամփոփուած դաղափարները: Ջանքերը՝ դտնելու Պլուզի աղբիւրները իսլամական դասական փիլիսոփայութեան մէջ, բախեցան անելի: Պարզ յիշեցումի դժով կարելի է թուել մէկ քանին այդ երեք դարերու իսլամական իմաստասիրութեան վերածնունդի հսկաներէն՝ Ալ-Քինտի (Թ. դար), Ալ-Ֆարաբի (Ժ. դար), Ալ-Մասըաուայ (ԺԱ. դար), Իպն Սինա (ԺԱ. դար), Ալ-Ղազալի (ԺԱ-ԺԲ.) դար), Իպն Ռուշտ (ԺԲ. դար): Վերոյիշեալ հեղինակներու գործերը լայն տարածում ունէին շրջանի երկիրներուն մէջ, եւ հետագային՝ նոյնիսկ եւրոպական իմաստասիրական դպրոցներուն մօտ: Սակայն ոչ մէկ համոզիչ փաստ կարելի է բացայայտել թէ Երզնկացին նշուած իմաստասէրներու գործերէն որեւէ մէկը ունենար իր տրամադրութեան տակ, «Ի Տաճկաց Իմաստասիրաց...»ը պատրաստած ատեն, կամ՝ առնուադն գործածէր զայն իրրեւ անուղղակի աղբիւր:

«Ի Տաճկաց Իմաստասիրաց...»ին կլիսափիլիսոփայական, խորհրդապաշտ ոճը, ինչպէս նաեւ անոր դրական եւ դաղափարական իւրայատուկ յօրինուածքը ուժգնօրէն կը յիշեցնեն կարգ մը իսլամական նոր-պղատոնական եւ նոր փիլիսոփայութեան դաղափարադաններու իմաստասիրական դրութիւնները: Ասոնցմէ ամենէն աւելի հալածուած, սակայն ամենէն կազմակերպուածն է (մտաւորական եւ ընկերային մակարդակներու վրայ) «Իխուան ալ-Սաֆա»ն (إخوان الصفاء) մօտաւոր թարգմանութեամբ՝ «Մաքրութեան», «Անսպակուութեան Եղբայրները, կամ՝ Եղբայրութիւնը»:

«Իխուան ալ-Սաֆա» աղանդը իսլամական փիլիսոփայութեան պատմութեան մէջ ծանօթ է իր «Թուղթերով», կամ՝ «ճամակներով» (رسائل): Թիւով՝ 52, այս «Թուղթ»երը ամփոփուած են չորս հատորներու մէջ, «Իխուան ալ-Սաֆայի Թուղթերը» (رسائل اخوان الصفاء) (2) ընդհանուր խորագրով: Յիշեալ չորս հատորները կը պարունակեն դպրոցին ամբողջ դիտութիւնը, դաւանանքը, կեանքի դաղափարաբանութիւնը, բնազանցութիւնը: Իրենց ժամանակին համար համայնադիտարանի մը դերը կատարած են անոնք, սակայն վերապահուած դիսաւորաբար դպրոցին «աշակերտներուն», կամ՝ սակաւաթիւ «նուիրեալներուն», «եղբայրութեան անդամներուն»: Բաղդատական անմիջական քննութիւն մը իսկ բաւական է ապացուցելու թէ այս համայնադիտարանը՝ «Րասա'էլ Իխուան ալ-Սաֆա»ն միակ աղբիւրն է «Ի Տաճկաց Իմաստասիրաց...»ին:

2. اخوان الصفاء، رسائل اخوان الصفاء و خلدان الوفاء

في اربع مجلدات، بيروت: دار صادر 1957

Երզնկացիի գրքոյլը համառօտ քաղուածքն է ընդարձակ աշխատութեան մը, որ իսկականին մէջ փիլիսոփայական-կրօնական խտտակեաց դպրոցի մը ամբողջ գիտութեան եւ դաւանանքին հանդանակն է: «Ի Տաճկաց Իմաստասիրաց...»էն կարգ մը հատուածներ յարասացութիւններ են, ուրիշներ՝ բառացի թարգմանութիւններ, իսկ ոմանք՝ ամփոփումներ: Բնագրին ամբողջութեամբ հաւատարիմ մնալու իր սկզբունքէն չչեղելու մտահոգութեամբ, Երզնկացի յաճախ արարերէն բառերը գործածած է տառադարձումով: Այն հարցը՝ թէ ինչպէս Յովհ. Երզնկացի առիթը ունեցած է շիման մէջ մտնելու արարերէն լեզուին ու արարական մշակոյթին հետ, կարելի է ամփոփ կերպով պարզել:

Երզնկացի կը հանդիսանայ ԺԳ. դարու հեղինակ, հակառակ անոր ծննդեան եւ մահուան թուականներուն շուրջ եղած տարակարծութեանց: (Հ. Գարբիէլեան կ'ընդունի 1250-1326 թթ.ը, (3), իսկ Գ. Գրիգորեան՝ 1230-1290 թթ.) (4): Յովհ. Պլուզ Երզնկացի ծնած է Երզնկա, ուր մոնղոլական արշաւանքներու շրջանին իսկ (1235-1244 թթ.) կարելի եղաւ շարունակել մշակութային եւ մտաւորական կեանքը, նոյնիսկ դայն հասցնելով բարձր մակարդակներու (5): Շուրջ երեք տարի, 1281-1284 թթ., Յովհաննէս Պլուզ Երզնկացի ճանապարհորդած է Մերձաւոր Արեւելքի տարբեր երկիրները, այցելած է Պաղեստին, Կիլիկիա, եւ ապա Վրաստան, «որտեղ տարբեր առիթներով բազմաթիւ փիլիսոփայական եւ աստուածաբանական քարոզներ ու ճառեր է կարդացել» (6): «Ի Տաճկաց Իմաստասիրաց...»ը պէտք է գրուած ըլլայ այս եռամեայ շրջապտոյտի ընթացքին, կամ՝ անկէ անմիջապէս ետք, դատած՝ գործին ոճէն, եւ ընագրին «Րաւա՛էլ»ին հետ ունեցած սերտ կապէն: Այլ խօսքով, տպաւորութիւններու, յիշողութեանց վրայ հիմնուած նօթերու հաւաքածոյ մը չի կրնար ըլլալ ան: «Րասա՛էլ»ը՝ ամբողջ չորս հատորներով, կամ՝ հատուածներով, կամ իրբեւ ամփոփում, պէտք է անհրաժեշտաբար դառնուած ըլլայ Երզնկացիի տրամադրութեան տակ: Իսլամական փիլիսոփայական մտքի պատմաբաններուն մօտ ընդունուած է այն տեսակէտը թէ այս ընդարձակ համայնագիրտարանը ունեցած է նաեւ

3. Հ. Գարբիէլեան, Հայ փիլիսոփայական Մտքի Պատմութիւն, հտք. Բ., Երեւան, 1958, էջ 126:

4. Գ. Գրիգորեան, Յովհաննէս Երզնկացու փիլիսոփայական Հայեացքները, Երեւան, 1962, էջ 7:

5. Նոյնը, էջ 9:

6. Ս. Ալեւշտեան, Յ. Երզնկացու Իմաստասիրական Անյայտ Աշխատութիւնը, «Րամբրի Մատեմադարան»ի, հտք. Գ., Երեւան, 1958, էջ 298:

ներածական – ամփոփում մը, ծանօթ՝ «Ալ – Րիսալաթ էլ – ժամի'ա» (الرسالة الجامعة) շնունով, որ իր կարգին նաև ունեցած է ամփոփում մը՝ «Ժամի'աթ էլ – ժամի'ահ» (جامعة الجامعة) :

Արեւշատեան հաւանական կը նկատէ թէ Վի Տաճկաց Իմաստասիրաց...»ը Երզնկացին դրած ըլլայ իրրեւ նախապատրաստական աշխատանք իր հետադայ դիտական ուսումնասիրութիւններուն՝ «Յաղագս Երկնային Ծարժմանն» եւ «Յաղագս Երկնային Չարդուց»ին համար (դրուած՝ Թիֆլիս, 1284 թ.ին), որոնք իրենց բովանդակութեամբ որոշ նմանութիւններ ունին Վի Տաճկաց Իմաստասիրաց...»ին (7) : Սակայն Վիտուան ալ – Սաֆա»յի իւրօրինակ եւ դադանուսոյց փիլիսոփայութեան ուղղակի եւ անուղղակի ազդեցութեան քննարկումը՝ Երզնկացիի սեփական աշխարհայեացքին, ինչպէս նաև հայ փիլիսոփայութեան հետադայ զարգացման փուլերուն վրայ, այս սերտողութեան ծիրէն դուրս կը մնայ :

Նախքան Վի Տաճկաց Իմաստասիրաց...»ին եւ անոր արարելէն ընադրին համապատասխան մասերուն ներկայացումը, անհրաժեշտ է ընդհանուր եւ համառօտ դիժերու մէջ բնորոշել Վիտուան ալ – Սաֆա»ն եւ անշուշտ՝ «Րասա'էլ»ը (8) :

«Ներայրութիւն»ը ծնունդ առած է Պարսյի մէջ, Պուսյհիտներու շրջանին (946–1055 թթ.) : Իր դադափարախօսութեան եւ կրօնական ըմբռնումներու արմատները ունենալով աւելի հին, հերձրածային Շի'ի աղանդի մը՝ «Իմամ'իլիա»ներու (Ը. դարու երկրորդ կէսը) աստուածաբանութեան եւ փիլիսոփայական սկզբունքներուն մէջ : Ժ. դարու վերջերուն եւ ԺԱ. դարու սկզբնաւորութեան, «Րասա'էլ»ը արդէն դուրս ելած էր «դպրոցին» նեղ շրջանակէն եւ տարածուած իսլամական աշխարհի զանազան շրջաններուն մէջ : Համայնագիտարանի չորս հեղինակները՝ Հասան ալ – Չանժանի, Ապու Ահմէտ ալ – Նահրա Ժուրի, Ալ – Աուֆի, եւ Չալիտ Իպն Րիֆա'ա, արդէն ծանօթ մտաւորականներ էին իրենց ժամանակաշրջանին մէջ : Գիրքը բաժնուած է չորս գլխաւոր մասերու՝ Ուսողական, Բնագիտական, Հոգեբանական եւ Աստուածաբանական – Իրաւագիտական (կանոնադրական) : Իրենց ժամանակին դիտութիւններու հաւաքական արձանագրութիւնն ու ներկայացումն է «Րասա'էլ»ը նոր պղատոնական եւ նոր փիլիսոփայական ընդանցութեանց վրայ հիմնուած : Իրենց բնագիտական իմացումները մեծ չափով արիստոտէլեան, են, երանգաւորուած քրիստոնէական, հրէական, իսլամական եւ նոյնիսկ պարսկական եւ հնդկական

7. Նոյնը :

8. Նիւթի պարզարմամմ համար մեր գլխաւոր ախրիւրը կը համդիսամայ՝ Prof. Majid Fakhry, **A History of Islamic Philosophy**, New York, Columbia, Univ. Press, 1970, pp. 185-203.

կրօններու տարբեր ուսուցումներով: Հեղինակներու խորհրդապաշտ եւ ճակատադրապաշտ տրամադրութիւնները՝ բխած իրենց աստղաբաշխութեան նուիրուած ամբողջ կիսա-գիտական կառուցուածքէ մը, գործին կու տան անոր տեսակ մը մթազին, խորհրդաւոր բնոյթը:

Հակառակ իրենց փիլիսոփայական ամբողջ դրութեան հաւաքողական, հետեւողական բնոյթին, հեղինակները երբեք չեն յիշեր իրենց աղբիւրները: «Րասա'էլ»ի մէջ յաճախ կարելի է հանդիպիլ կրկնութիւններու, ճոռմարանութիւններու, նոյնիսկ յարակարծական ըմբռնումներու փիլիսոփայական զանազան հարցերու մասին: Օրինակ՝ հակասական է մէկ կողմէ հաստատել թէ մարդկային կամքը գերազանցապէս ազատ է՝ (հետեւելով «Մու'թաղիւ» (المعتزلة) դպրոցին անձնիշխանական, բանապաշտական սկզբունքներուն մարդու էութեան մասին) եւ միւս կողմէ՝ որդեգրել ճակատազրապաշտական-աստղաբաշխական նախապաշարումները մարդկային կեանքի բնոյթին եւ վախճանին մասին (թէ՛ ամէն իրադարձութիւն կանխորոշուած է, թէ՛ մոլորակներու շարժումները կը ղեկավարեն, կը սահմանեն կեանքը երկրի վրայ):

«Իխուան ալ-Սաֆա»յին կողմէ «Րասա'էլ»ը կը նկատուէր ներածական մը, «առաջնորդ» մը, նախաճաշակը տալու շատ աւելի խորունկ, դադանի ճշմարտութիւններու, վերապահուած միայն շատ սակաւաթիւ առանձնաշնորհեալներու, որոնք անցած էին «իմաստութեան պարտէզին սեմէն ներս»:

Դպրոցին ամբողջ դաւանանքը, կամ՝ նպատակը կ'ամփոփուի հետեւեալ ձեւով, թէ Նորայրութեան հիմնական իտէալն է «ճանաչումը (կամ քննարկումը, նկատառումը) բոլոր նիւթական-զգայական եւ աննիւթական-իմացական գոյերուն, իրենց ծագումէն մինչեւ վախճանը... իրբեւ այնպիսիք, որոնք ծնունդ կ'առնեն միակ Սկզբունքէ մը, միակ Պատճառէ մը, միակ Աշխարհէ մը եւ միակ Հոյիէ մը» (Րասա'էլ, հտր. Դ., էջ 42): Այսպէս, սոկրատեան ոճով, «իմաստութեան որոնումը» եւ կեանքը անոր լոյսին տակ, Նորայրութեան կեանքի նպատակը եւ ձեւն էր: Անոնք կ'ապրէին քրիստոնէական խստակեաց, ընկերութենէն մեկուսացած ժուժկալ պայմաններու մէջ:

Այժմ՝ «ի Տաճկաց Իմաստասիրաց...»ին եւ «Րասա'էլ»ի համապատասխան հատուածներուն աստիճանական բաղդատականը:

Երզնկացիի գիրքը բաժնուած է չորս ենթադրութիւններու, որոնք ըստ նիւթի ոչ մէկ ձեւով կը համապատասխանեն «Րասա'էլ»ի չորս հատորներու բաժանումի օրէնքին՝ «Յաղազս Ապացուցի», «Վասն Նիւթի եւ Տեսակի», «Յաղազս Լինելութեան եւ Ապականութեան» եւ «Խնտալոյս Իմաստասէրի Յովհաննէս Երզնկացոյ», - որ ըստ Արեւշատեանի, պարզապէս երրորդ ենթադրութիւն շարունակութիւնն է, բայց իրբեւ վերնադիր աւելցուած գրիչին կողմէ:

ՅԱՂԱԳՍ ԱՊԱՑՈՒՑԻ (9)

(91 բ) Ապացոյցն է Ֆըրե-
լոյն լինի, եւ Ֆըրելն է Ղիասն,
որ է խողալն. եւ սեռ ապա-
ցուցին Ֆըրելն է: Ու Ղիասն
այն է, որ զսեռն բաժանէ մինչ
յանհասն, որ է արձակել:

(92 ա) ... է այս, զոր մեք
կու տեսանենք, օղն է, չէ Ֆա-
լաքն. զի մեք զդաշարանքս
քան զհինդ կամ զտաս Ֆար-
սախ աւելի չտեսնու, ապա
յայտ է, որ խելացն Ֆըրելովն
զտանի Ֆալաքն, որ է իմացա-
կանին եւ ոչ զդաշարանօք (10):

(92 բ) Եւ Ֆըրելն չորս լի-
րօք լինի՝ խելացն իմացմամբ,
եւ փորձելով, եւ զդաշու-
թեամբ, եւ հաւատալով:

Խելացն արդարութեամբ,
յորժամ ասեմք հինդ ի հինդ՝
քսանհինդ է...

و اما طريق البرهان والفرض
المطلوب فيه فهو معرفة الصور
المقومة التي ذوات أعيان
موجودة ، والفرق بينها وبين
الصور المتممة لها هي كلها
صفات لها وأحوال ترادفت
عليها وهي موصوفة بها ،
ولكن الحواس لا تميزها لأنها
مغمورة تحت هذه الاوصاف
مغطاة بها ، فمن أجل هذا
احتيج الى النظر الدقيق
والبحث في معرفتها والتمييز
بينها وبين ما يليق بها
ويترادف عليها بطريق القياس
والبرهان . . .

(«الرسائل» (١) / ٤٣٢)

9. Այս մասը կարելի է կոչել մաեւ «Մարդկային մտնաչոզութեան ձեւերն ու սահմանները»:

10. Համապատասխան արաբերէմ հատուածը կը մէջբերեմք միայն իբրեւ տնուդղակի ազբիր, որովհետեւ Երզնկացի հոս կը գրէ ամփոփելով ընդարձակ գլուխ մը՝ մտնաչոզութեան ձեւերում մասին: Ուրեմն, արաբերէմ հատուածը պիտի օգնէ բաղդատելու Երզնկացիի եւ «Բասա'էլ»-ի գործածութիւնները «ղիաս», «ապապացոյց» եւ «Փքբել» բառերում (القياس، البرهان، التفكير): Երզնկացի՝ «Փքբել»ը կը գործածէ իմանալու, մանջնալու իմաստով. «ապապացոյց» - برهان - է, իսկ «ղիաս»ը - القياس - , փաստարկում ընդհանուր ձեւով առնուած եւ ոչ իբրեւ հաւաքարամութիւն (Syllogism): «Ղիաս»-ին նպատակն է մանջնալ, գիտնալ, քննարկել իբրումն էական, գոյացական յատկութիւնները: Ջգայարամքները միշտ չեն փոխանցեր մեզի առնց ամբողջական, մշմարիտ բնոյքը կամ իսկութիւնը (essence): Հետեւաբար պէտք է փնտռել մտնաչոզական այլ միջոցներ, մասնաւորաբար այն պարագաներում, երբ առարկան կ'իյնայ զգայարամքներու հատչութեան, կարելիութեանց սահմաններէն անդին. օրինակ, այսպիսի իմացական (intelligible) առարկաներ են երկնային մարմնները, «ֆուլաք»ը (الفلك), մաեւ ուսողական դիտութեանց առարկաները, հարցերը կամ ըմբռնումները:

Իսկ փորձելն ի մէջ խե-
լացն եւ զղայութիւն լինի. որ-
պէս վարողն սաւֆրային,
սակամոնին եւ սաւգային զա-
րիկոնն, զոր զիտէ խելքն, որ
ոչ է պատահամբ, այլ բնու-
թեամբ, զի թէ պատահամբ
էր, լինէ, ժամ մի, եւ ժամ մի
ոչ լինէր:

Իսկ զղայութեամբ է, որ-
պէս այրելն հրոյն եւ կտրելն
թրին, երկայնութիւն եւ լայ-
նութիւն մարմնոյն...

(93 ա) Իսկ հաւատալն,
որպէս շինուածն Երուսաղէմի
եւ կամ մարզարէիցն...: Եւ
յայտ չորիցս ոչ մնայ ինչ ար-
տաքոյ ի Փքրելն:

(100 բ) Երեք են զիտու-
թիւն մարդկան. առաջին՝
զգալիքն եւ զղայութեամբն,
զոր կատարեալքն եւ տղաքն
եւ այլք կենդանեաց ընկերու-
թիւն ունին զղալն, (երկ-
րորդն՝) խելացն իմացումն,
որ կատարելոցն միայն է, եր-
րորդն՝ ապացուցականն, որ
իմաստնոցն է զործ (11):

ان علم الانسان بالمعلومات
يكون من ثلاث طرق :

- طريق الحواس الخمس
الذي هو أول الطرق . ويشترك
الناس كلهم فيها وتشاركهم
الحيوانات .

- والثاني طريق العقل .

- والثالث طريق البرهان
الذي ينفرد به قوم من العلماء
دون غيرهم من الناس وتكون
معرفتهم بها النظر في
الرياضيات والهندسة
والمنطق .

«الرسائل» (2/397-396)

11. Այս մէջբերումը (100 բ) կու գայ Երզնկացիի գիրքին երրորդ գլուխէն, «Յաղագս լինելութեան եւ Ապակամութեան», եւ բառացի թարգմանութիւնն է հա-
մապատասխան արաբերէն հատուածին: Իսկ առաջին մէջբերումը (92 բ) կը թուի ըլ-
լալ Երզնկացիի (որպէս միջնադարեան կրօնափիլիսոփայական մտածող) իմբնութեան
կերպը դասաւորելու մանչոյնութեան ձեւերը, ամենց վրայ աւելցնելով հաւատքը:
Երզնկացիի համար հաւատքը մանչոյնական ընդունելի ձեւ մըն է, որովհետեւ կը-
րօնքի հարցերը սկզբունքային տեսակետէ արդէն կարելի է փաստել եւ արդարա-

ՎԱՍՏՆ ՆԻԻԹԻ ԵՒ ՏԵՍԱԿԻ

(93 բ) Գոյացութիւն, քանակն եւ որակն նիւթ եւ տեսակ լինին միմիանց, քանակն՝ տեսակ, եւ որակն՝ նիւթ. օրինակ, շապիկն՝ տեսակ եւ կտանն՝ նիւթ: Եւ կտանն՝ տեսակ եւ մանածն՝ նիւթ, մանածն՝ տեսակ եւ բամբակն՝ նիւթ, եւ բամբակը՝ տեսակ եւ բոյսն՝ նիւթ, բոյսն՝ տեսակ եւ տարերքն՝ նիւթ, տարերքն՝ տեսակ եւ մարմին իւր նիւթ, մարմին՝ տեսակ առ զոյացութիւնն որ է ճաւհար, եւ զոյացութիւնն իւր՝ նիւթ... (12):

اعلم ان الهوية والكمية
والكيفية كلها صور بسيطة
معقولة غير محسوسة • فاذا
تركت بعضها على بعض صار
بعضها كالهولي وبعضها
كالصورة • فالكيفية هي صورة
في الهوية والهوية هيولي لها ،
والكمية هي صورة في الهوية
والهوية هيولي لها • والمثال
في ذلك من المحسوسات ان
القميص صورة في الثوب
والثوب هيولي له ، والثوب
صورة في الغزل والغزل هيولي
له ، الغزل صورة في القطن
والقطن هيولي له ، والقطن
صورة في النبات والنبات
هيولي له ، والنبات صورة في
الاركان وهي هيولي له ،
والاركان صورة في الجسم
والجسم هيولي لها ، والجسم

ցընել զուտ տրամաբանութեամ, փիլիսոփայական փաստարկումներու մտարով:
Հոս պէտք է հարթութի շփոթը կարգ մը հեղինակներու մօտ ներգնակացիի երբեմն
երեք եւ երբեմն ալ չորս մամաչողական ձեւեր ընդունելու: Տես՝ Ս. Արեւշատեան,
Յ. Երզնկացու Իմաստասիրական Անյայտ Աշխատութիւնը, «Բանբեր Մատենադարան»
հտր. Դ. Էջ 301, մատ. Թ. Աւետիքեան, Յ. Երզնկացիի Բնափիլիսոփայական
Հայեացքները, «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հտր. Դ., Պէրբուք, 1973, էջ
141-144: «Քասա՛կ»-ը կը յիշէ մամաչողութեան երեք ձեւեր, զգայարամքները
(الحواس), խելքը կամ իմացականութիւնը (العقل), եւ տրամաբանութիւնը
(طريق البرهان), որ վերապահուած է զուտ վերացական տրամաբանական ու-
սողական յարաբերութիւններ, խնդիրներ ըմբռնելու: Այս երեք ձեւերը կը համա-
պատասխանեն գոյութեան երեք ձեւերուն, կամ կերպերուն, իրեն իրենց առար-
կան: Այսպէս՝ - զգայարամքները՝ զգացականներուն (الحواس - الحواسات), իմա-
ցականութիւնը՝ վերացականներուն, (իմացականութիւններուն), (العقل - العقولات),
- տրամաբանութիւնը՝ տրամաբանական, քուարամական հարցերու - (طريق البرهان -
الرياضيات):

12. Ինչպէս յստակ է, քարգմանութիւնը հոս եւս բառացի է, մինչև օրինա-
կին՝ «շապիկ» (القميص) մոյմութիւնը: Սակայն ներգնակացիի մտքին մէջ շփոթ մը

(93 բ) **Զինչ ձեւ որ ի դոյութիւնն ի տես դայ, որ է ձօհարն, անտեսակ կոչի, եւ տեսակովն լի բաժանումն էակաց:** Եւ տեսակն, որ ի միոյ նիւթոյ լինի, բազում են, եւ նիւթն մի, որպէս յերկաթոյ ե՛ւ թուր, ե՛ւ դանակ, ե՛ւ այլ բազում իրս:

(93 բ) Եւ նիւթն չորս ազգք լինին: Առաջին, միւքարինստից, որպէս փայտ հիւսան եւ երկաթն դարբնի:

Երկրորդն, միւքարեան կոչի, որպէս չորս տարերքը եւ դամենայն ինչ, որ ի ներքոյ լուսնիս են: Յայս նիւթէս տեսականան մինչ ի մարդակ դետնոյս մայտայնինն եւ բոյսն եւ կենդանիքն:

(94 ա) Երրորդն միւքարեան կոչին. այսպէս ֆալաքնին եւ աստեղք եւ որ ինչ ի նոսա կան:

Չորրորդն, զոր միւքարեան կոչեն, որ ձօհար պարզ իմանալի, յոր ոչ հասանի զգայութիւն, ուստի եւ սկիզբն ամենայն իրաց ի նմանէ է եւ ինքն տեսակ է դոյացութեան, որ է ձօհարն, եւ ի նմա

صورة في الجوهر والجوهر
هيولي له ۰۰

«الرسائل» (ص ۲/۷)
تنتهي الاشياء كلها الى
الهيولي الاولى ، التي هي
صورة الوجود حسب ، لا كيفية
فيها ولا كمية وهي جوهر
بسيط لا تركيب فيه بوجه من
الوجوه ، قابل للصور كلها
ولكن على الترتيب كما بينا لا
أي صورة كانت ۰۰

«الرسائل» (ص ۲/۸)
ان الهيولي على أربعة
أنواع منها :

– هيولي الصناعة التي هي
كل جسم يعمل منه وفيه
الصانع صنعته ، كالخشب
للنجارين ، والحديد للحدادين .
– أما الهيولي الطبيعية
فهي الاركان الاربعة وذلك ان
كل ما تحت فلك القمر من
الكائنات ۰۰۰ فمنها تتكون ۰۰۰
(واليها تستحيل عند الفساد)
– وأما هيولي الكل فهي
الجسم المطلق الذي منه جملة
العالم ، وأعني الافلاك
والكواكب والاركان والكائنات .
«الرسائل» (ص ۲/۶)
– وأما الهيولي الاولى فهي
جوهر بسيط معقول ، لا يدركه

կայ «մատիար», կամ «ձօհար» (جوهر) բառին իսկական գործածութեան եւ իմաստին շուրջ: Արարեբեմ «ժառուհար» բառը կը նշանակէ գոյացութիւն, (Substance): ինք «հուրիս» (هوية) կը քարգմանէ իբրեւ գոյացութիւն, մինչդեռ բառը կը նշանակէ էութիւն, լինելութիւն, (բան մը, being), «հայուլս» (هيولى) կը քարգմանէ միւք, «ժի'սմ» (جسم) մարմին, «սուրա» (صورة) իբրեւ տեսակ: (form): Յաջորդ հաստատմին մէջ (93 բ) դժուարութիւն կը ծագի «հայու-

քանակ եւ որակ ոչ երեւի, այլ քանակն եւ որակն պատկերնի են պարզ... (13) :

ՅԱՂԱԳՍ ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՊԱԿԱՆՈՒԹԵԱՆ

(94 բ) Եօթն են մարմինք, որ ի ներքոյ լուսնին երկնիցն են, չորս տարերք եւ կենդանիք, բոյսք եւ մատանին. եւ առաջին սոցա է հողըն, որ իւր երկրորդ չկա եւ սեռ է արեզակն : Չորս տարերքս սեռ խաս կոչին, եւ կենդանիք եւ բոյս եւ մայրտանինն մասնաւորք կոչին, եւ այս եօթն մայրեր կոչին եւ խառնուածն սոցա ի նիւթոյ եւ ի տեսակէ եւ եօթն նոցայ մարմին :

(95 ա) ... Եւ այսպէս լինի երկու տեսակ՝ մինն հաստատուն եւ մին ոչ. եւ հաստատունն այն լինի, որ թէ խափանի՝ մարմին խափանի. եւ այն պարզ ճօհար կոչի մարմնոյն, որ ճօհարն, որ ջրախառնած է, հետ մարմնոյն ղինքն հաստատուն կու պահէ :

Ապա կատարեալ տեսակն այն է, որ երկայնութիւն եւ լայնութիւն եւ խորութիւն ունի, մարմինն գոյն եւ հոտ եւ համ, եւ որ թապալ լինի տե-

الحس، وذلك ان صورة الوجود حسب ، وهو الهوية
«الرسائل» (ص ٢/٦)

ان الاجسام التي تحت فلك القمر سبعة أجناس : أربعة منها هي الامهات الكليات ، وهي النار والهواء ، وثلاثة هي المولودات الجزئيات، وهي الحيوان ، والنبات والمعادن . ان الامهات كل واحدة منها مركبة من هيولي وصورة
«الرسائل» (ص ٢/٥٢)

الصورة نوعان : مقومة ومتممة . . . ان الصورة المقومة لذات الشيء هي التي اذا فارقت هيولاها بطل وجدان ذلك الشيء .

والصورة المتممة هي التي تبلغ الشيء الى أفضل حالاته التي يمكنه البلوغ اليها ، واذا فارقت هيولاها لا يبطل وجدان الهيولي .

«الرسائل» (ص ٢/٥٣)

լա՛լ - ուլլա» (هيولى الأولى) Առաջին, Սկզբնական նիւթ (prime matter) բառին շարք, գոր կրկին կը քարգմանէ իբրև «մաւիար» (այսինքն գոյացութիւն, substance) : Սակայն ակնի ուշ՝ (102 ա) երգնկացի ինքզինք կը սրբագրէ (هيولى الأولى) մ քարգմանելով իբրև «նիւթն առաջին» փիլիսոփայական, վերացական իմաստով : Բայց երբաբանութեան այս շփոթը իր անբարադրը ունեցած է զիբքին այս մասերուն վրայ, անոր տալով իմաստի եւ նիւթըրութեան անորոշութիւն :

13. կրկին, քարգմանութիւնը բառացի է մինչև օրինակները :

(100 ա) Եւ մատանին փոքրերն պատուականն յակունդն է եւ ի կենդանիքն փոքր ճճիքն ժրժուունքն, եւ ի կենդանիսն պատուական մարդն, ի բոյսերն փոքր ինքնաբոյսք են եւ մեծ եւ պատուական ամբրաւենին՝ բուսոցն տեսակն, որպէս կենդանի է, որ է զգլուխն կտրես՝ մեռանի, եւ թէ բեւեռ մի ի սիրտն զարկնեն՝ մեռանի, եւ ամենայն վերջնոցն առաջի յատիճանէն իջանի, սկսեալ ի վերնական դասուց հրեշտակացն:

(100 ա) Առաջին իմաստութիւն է մարդուն ճանաչելն զինքն, որ լինի ինն իրոք: Առաջին՝ հայել ի կերպ մարմնոյն եւ որ ի նմայ: Երկրորդ՝ հայել ի կերպ հոգոյն եւ ի դործն: Երրորդն՝ յերկուցն միութիւն, եւ որ յերկուք են... (14):

(100 բ) Եւ ի մարդն ինն ճօհար կայ. ոսկրն, ղեղն, երակն, ճրաղուն, արիւն, միսն, մորթն, ղունկն, մազն:

(100 բ) Տասն բնութիւն կայ ի մարդն, ի գլուխն ու զլինքն, կուրծքն վերի եւ ներքի, փորն, սիրտն, ան-

اول مرتبة من الحيوانية
أيضا متصلة بأخر النبات ،
كما ان أول النباتية متصل
بأخر المعدنية .

(الرسائل) (ص ۳/۲۲۷)
فان النخل اذا قطعت
رؤوسها جفت ... ماتت ...
فهذا الاعتبار يبين ان النخل
نبات بالجسم حيوان بالنفس .
(ص ۳/۲۲۶)

اعلم ان افتتاح جميع العلوم
هو معرفة الانسان نفسه ،
ومعرفة الانسان تكون من ثلاث
جهات احداها ان يعتبر احوال
جسده وتركيب بنيته ...
والآخر اعتبار احوال نفسه
والآخر احوالهما مقترنين
جميعا ...

(ص ۲/۴۶۲)

وجد في تركيب الانسان تسع
جواهر وهي العظام ، والمخ ،
واللحم ، والعروق ، والدم ،
والعصب ، والجلد والشعر
والظفر .

(ص ۲/۴۶۳)

14. Երգմկացիմ ինքնամանաչումի իմը ճեւերէմ միայն երեքին կ'ամպրադառնայ երբ բառացիօրէմ կը քարգմամէ «Մասա'էլ» իմ համապատասխան հատուածը, որ ինքնամանաչումը կը մկատէ իրրիւ բոլոր գիտութեանց եւ «իմաստութեան սկիզբը»:

դամն, ծուռկըն, ջիղըն, ոտ-
քըն, որ սոյն է ամենայն ան-
դամոցն, զոսկրն, զջրերն,
զկապերն...

(101 բ - 102 ա) Մարմինն
ամենայն յերկուց է՝ ի նիւ-
թոյ և ի տեսակէ. նիւթն տե-
սակին ընդունող է: Եւ առա-
ջին տեսակն, որ ի նիւթոյ է,
երկայնութիւն և լայնութիւն
և խորութիւն ունի, որ և
զայլ տեսակըն ընդունի և ըզ-
մարմինն զեռանգիւն, զքա-
ռանգիւնն և զայլն:

(102 ա) Նիւթն առաջին
պատճառ է հոգոյն և խելըն
առաջին ճօհար է յաստուծոյ,
և խելըն զվնասն ի տես երբր,
և նախն ճօհար մի ի տես ե-
րբր, որ երկայնութեամբ և
լայնութեամբ և խորութեամբ
լինի. խելըն դործի յաստուծոյ,
նափսն դործի դործոցն աս-
տուծոյ որպէս կէտն, որ մա-
սըն չունի. այսպէս իմասցիս
անզորինակն աստուած, ի կի-
տէն զիծն երկայնի, որպէս
նափսն ի խելացն և որպէս ի
զծէն մարմինն է, որպէս նիւ-
թըն ի նափսէն և օրինակ բո-
լոր հաստատ մարմնոյն, որ-
պէս կերպն և հետ մուշակի
մարմնոյն պարունակող ֆա-
լաքն և անտի ի վերուստ հաս-
տատութիւնն աստեղացն և ի
մինչ ի դետն ի սա մարջաղն
բեր. և ապա մայտանին, ի
բոյսըն, ի կենդանիըն:

(102 ա - բ) Զինչ առ մար-
դէկ իջեալ է, յընթանուր հոգ-
ւոյն ճօհար մի լինի, և ի

(ص ص ۳۹۶ - ۲/۳۹۷)

الهيولي هو كل جوهر قابل
للصورة ، « والصورة » كل
شكل ونقش يقبله الجوهر
(ص ۳/۶)

الصورة المقومة لذات الجسم
هي الطول والعرض والعمق
والصورة المتممة ... كالتثليث
والتربيع والتدوير ...

(ص ۳/۲۵)

ان الله تعالى أول شخص
اخترعه وواجهه يسمى العقل
الفعال . (ص ۳/۴۶۵)
وافاض من العقل الفعال
فيض آخر دونه في الرتبة
يسمى العقل المنفعل وهي
النفس الكلية .

(ص ۳/۱۹۷)

واذا فاضت قوى النفس
الكلية الفلكية في الجسم الكلي
الذي هو جملة العالم الجسماني
ابتدأت من أعلى فلك المحيط
متوجهة نحو مركز العالم .

(ص ۳/۳۷)

واعلم يا أخي انه لما كان
العقل الذي نحن في ذكره قوة
من قوى النفس الانسانية هي
أيضا قوة من قوى النفس
الكلية ، والنفس الكلية هي
فيض فاض من العقل الكلي .

(ص ۳/۲۳۲)

Հողոյն ճօհարէն զօրութիւն
մի լինի ի խելացն ի զօրութե-
նէն, որ ի ցայտմանէ խելացն
է, որ ի Հողոյն իջեալ է (15) :

(103 բ) Այլ նաֆս ճօհար
է յետ մարմնոյն եւ շարժող է
մարմնոյն եւ տա բանաւորու-
թիւն, ընտրողութիւն եւ կամ
դործով, կամ զօրութեամբ.
ղխելքն եւ զնաֆսն յընթա-
նուր կոչեն, զի այն հասիցն
թտարող են :

(103 ա) Սահման նաֆսին
անուն է ընկերութեամբ, յոր
մարդ եւ կենդանիք եւ բոյսք
ընկերք են. եւ այլ մարդիկ եւ
հրեշտակք ընկերք են :

(104 ա) Առաջին ուստա-
քընն (բիստիւթ?) է, որ է չորս
արհեստն՝ համարողականն,

النفس الانسانية هي قوة
من قوى النفس الكلية وتذكر
أيضا العقل الانساني اذ هو
قوة النفس الكلية ، وتصف
أفعال النفس وقواها اذ كانت
النفس جوهره روحانية .

(ص ۳/۲۴)

ان النفس جوهره روحانية
حیة بذاتها ، فاذا قارنت
جسما من الاجسام صيرته
«جعلته س۰ د۰» حیا مثلها ۰۰۰
ان النفس قوتین اثنتین ،
احدهما علامة والاخرى فعالة .
وكل متعلم علما فان صورة
المعلوم في نفسه بالقوة ، فاذا
تعلمها صارت فيها بالفعل .
(ص ۱/۲۹۴)

ان النفس الكلية رتبها
فوق الفلك المحيط ، وقواها
سارية في جميع أجزاء الفلك
وأشخاصه بالتدبير والصناع
والحكم ، وفي كل ما يحتوى
الفلك من سائر الاجسام وان لها
في كل شخص من أشخاص
الفلك قوة مختصة به مدبرة
له ، مظهرة منه أفعاله .

(ص ۳/۱۹۰)

العلوم على أربعة أجناس :
العلوم الرياضية ، العلوم

15. Ինչպէս յստակ է, Երգնկացի՝ հոգիի, լինելութեամ եւ ապականութեամ
գլուխները բառացիօրէն բարգմանած է «Բասա՛լթէն, բայց օգտուելով՝ իրարմէ
սասմեակ էջեր հեռաւորութեամբ գտնուող զամագամ գլուխներէ: Այս իրողութիւնը
կրնայ առաջարկել այն տեսութիւնը թէ Երգնկացիմ չորս ընդարձակ հատրմներում
փոխարէն կրնար իր տրամադութեամ տակ ունեցած ըլլալ ամոնց ամփոփումը՝ «Բի-

երկրաչափականն, աստղաբաշխականն, երաժշտականն, երկրորդ՝ բանառութիւն, երրորդ՝ բնաբանականն: Գրքորդ՝ (Թէ չորրորդ ?) աստուածաբանականն:

(103 բ) Կարդ ուսումնականին նախ պարտ է զհամարողականն ուսանիլ, զի թուլթըն է իմաստութիւն: Եւ ապա զեղլիտիսն, որ կերպաբան եւ զիրքն է աշխարհիս: Եւ երկինքն թաղուիս յերկրաչափութիւն ունի: Եւ ապա զաստղաբաշխականն, որով զվերին աշխարհն ճանաչէ:

Ապա զընաւորութեանն ուսումն, որով զխօսիցն իմանայ զգորութիւն եւ զարուեստ, որ առանց խոկալոյ, խօսիլ չկարէ: Եւ ապա զընութեան եւ զըժշկութեան ուսումն ուսանի՝ զմարմնոց մարդկան բաժանումն...: Եւ ապա մըտանէ յընթանրական ուսումն եւ ապա ապացուցականն:

(104 ա) Ապա ի մուճառատ ճօհարնին եւ յասլն նիւթոցն, եւ ապա զմուճառատ հոգին ու զխելքն ճանաչէ եւ ելանէ ի սօքօք ի սրբութիւն աստուծոյ զյարութիւն եւ ըզնոր աշխարհն զիտեւ. եւ այս են զիտութիւնն ուսմանցն (16):

սալաք ալ - ժամի'աճն (رسالة الجامعة):

Երգնկացիի բնագրին (102 բ - 103 ա) մասերում մէջ տրուած երկու օրինակները՝ բաժակի մը տակ դրուած բիրեղին եւ ապակեայ գմբէքին, բացատրելու համար զընդհանուր հոգիին եւ մարդու յարաբերութիւնը, կարելի չեղաւ գտնել «Բասա'էշին մէջ: Սակայն արաբերէն բառերու առատ գործածութիւնը («պլօք», «կըք-դայ», «կուպայ» եւայլն) ենթադրել կու տայ որ արաբական աղբիւր մը պէտք է ունեցած ըլլար մտն այս հատուածներում համար:

16. Կրկին, բառացի քարգմանութիւն գիտութեանց չորս բաժանումներում մասին ըստ առարկայի եւ նպատակի:

المنطقيات، العلوم الطبيعية
العلوم الالهيات
- الرياضيات على أربعة
أنواع: الارتماطقي ... وهو
معرفة العدد والجومطريا،
وهو علم الهندسة ...
الاسطرونوميا وأخيرا
الموسيقى .

(ص ٧٨ / ١)

- المنطقيات فهي معرفة
الاشياء الموجودة التي هي
مصورة في أفكار النفوس،
ومبدأها من الجوهر .

- الطبيعية هي معرفة
جواهر الاجسام وما يعرض لها
من الاعراض . مبدأ هذا العلم
من الحركة والسكون .

- الالهيات هي معرفة
الصورة المجردة، المفارقة
للهيولي ... ومبدأ هذا العلم
من معرفة جوهر النفس .

(ص ٧٩ / ١)

(104 ա) Ասեն թէ աշխարհ որպէս մեծ կենդանի է, եւ թէ որպէս բազում զօրութիւն կայ ի կենդանին, նոյնպէս եւ յաշխարհս քարշողական, ըմբռնող, այլայլող եւ այլն... Որպէս ստամոքն զկերակուրն քարշէ եւ ըմբռնէ, եւ տունկընն է բոյսը՝ զջուր, նոյնպէս եւ երկիր լինի. ի մայրանին քարշէ եւ շինէ...

(104 բ) Աշխարհս կենդանի է մի մեծ, եւ թն աստեղընն յինքն եւ թն անգամ է...

ԽՍՏԱԼՈՅՍ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵԶԸՆԱՅՈՅ

(106 ա) Երեւելի արաբածքս մեծ աշխարհ ասի եւ մարդ փոքր աշխարհ, եւ որպէս մարդ հողի է եւ մարմին, նոյնպէս աշխարհ. եւ զոր ինչ կայ ի մեծ աշխարհս՝ մարմնեղէն եւ հոգեղէն, կայուն եւ դնայուն, զոյացութիւն եւ պատահումն, չոր եւ դալար, ամենայն կայ ի փոքր աշխարհ եւ փոքրովս մեծն իմանին: Եւ ամենայն որ յաշխարհի կայ՝ սկիզբն ունի եւ վախճան. սկիզբն գոյութիւն է ամենայնի եւ վախճանն քակտումն է մասանցն:

(106 բ) Եւ դարձեալ, ամենայն գոյացութիւն չորս սահմանով է. պատճառն եւ նիւթն, ներգործութիւն եւ գործօղն: Եւ թէ չէր նիւթն, ուստի՞ լինէր գոյացութիւնսն. եւ թէ չէր գոյացութիւն, ուստի էր զօրութիւն. եւ թէ ոչ էր զօրութիւն, ուստի էր ներգոր-

ان العالم انسان كبير
(۳/۲۱۲)

فيه القوى السبع، الجاذبة،
الماسكة، الهاضمة، الدافعة،
الغاذية، المصورة، النامية
(ص ۲/۳۹۰)

ان حكم جسمه (العالم)
بجميع أجزائه البسيطة
والمركبة والمولدة يجرى مجرى
جسم انسان واحد أو حيوان
واحد بجميع أعضاء بدنه
المختلفة ...

(ص ۳/۲۱۳)

ان العالم انسان كبير
والانسان عالم صغير ...
الجسم الكلي هو العالم بأسره
والنفس الكلية هي نفس
العالم بأسره

ان لكل كائن وحادث تحت
فلك القمر أربع علل : علة
فاعلة وعلة هيولانية وعلة
صورية وعلة تامة
فاعلة الفاعلة للجواهر
المعدنية هي الطبيعة ... وأما
علة الهيولانية للجواهر
المعدنية فهي الزئبق

ծուծիւն. վասն որոյ սօքօք դոյացան ամենայն արարածք: ... Եւ դործն շարժիլ ասէ, եւ շարժելն ջերմային է եւ ջերմն արոյ է եւ դործքն անշարժ է, եւ անշարժն պաղ է, եւ պաղն իդական, եւ պաղութիւն եւ ջերմութիւն ծնաւ զչորութիւն եւ զգիւծութիւն, զի ծնաւ չորութիւն զպաղութիւն եւ պիջութիւն զտաքութիւն. եւ եղեն չորս տարերք եւ մայր, որ ծնան զմեծ աշխարհս եւ զփոքր (17):

والكبريت ٠٠٠ والعلة الصورية
هي دوران الافلاك وحركات
الكواكب حول الاركان الاربعة
التي هي النار والهواء والماء
والارض واما العلة التمامية
فهي المنافع التي ينالها
الانسان والحيوانات من
الجواهر المعدنية
(ص ٢/٨٩)

Հատուած 107 ր-էն ետք Երզնկացի կը սկսի բաւականին մանրամասն եւ նկատելի ոգեւորութեամբ, նկարագրել եօթը մոլորակները (չորսին արարելէն անունները յիշելով մէկ քանի տեղ՝ «Ձօհալ», «Մառետ», «Ձօհրայ», «Օտարիտ»)՝ Երեւակը, Հրատը, Լուսարերը, Փայլածուն, Լուսնթաղը, Արեգակը եւ Լուսինը եւ իրենց «տուները» 12 «կենդանակերպք»ին մէջ – զօտիաքի նշանները: Այս վերջինները կը դասուորէ ըստ չորս տարրերուն, այսպէս՝ Խոյը, Առիւծը, Առեղնաւորը՝ հրային. Յուլը, Կոյսը, Այծեղջիւրը՝ հողային. Եկաւորը, Կշիւրը, Ջրհոսը՝ օդային. Խեցեպտինը, Կարիճը, Ձուկը՝ ջրային (107 ր – 108 ա): Այս մասերը բառացիօրէն կը համապատասխանեն «Ռասա'էլ»ի կատարած բաժանումին (Ա. հտր., էջ 119-120):

Կրկին, բացարձակ նմանութիւնը մարդկային զգայարաններուն եւ մոլորակներուն միջեւ – վերջինները իբրեւ «երկնից զգայարանները», առնուած է չորրորդ հատորէն (էջ 345): Նաեւ՝ աշխարհի եւ մարդու արտաքին երեւոյթին նմանութիւնը (110 ր) տառացիօրէն կու գայ երկրորդ հատորէն (էջ 446):

Թերեւս որոշ հետաքրքրականութիւն կը ներկայացնէ հետեւեալ ցանկը «Ռասա'էլ»ի այն գլուխներուն, զորս Երզնկացին պէտք էր ունեցած ըլլար իր տրամադրութեան տակ, պատրաստելու համար իր դրքոյիլը:

17. «Ռասա'էլ» կը քուէ արիստոտելեան բնագանցութեան աւանդակամ չորս պատճառները՝

Նիւթակամ պատճառը (material cause)

Ձեւակամ պատճառը (formal cause)

Ներգործիչ պատճառը (efficient cause)

علة هيولانية

علة صورية

علة فاعلة

Հատոր Ա - «Ուսուցական գիտութեանց» մասին

- Թուղթ (կամ «Րիսալա») - 2 - Երկրաչափութեան մասին
- « 3 - Աստղագիտութեան մասին
- « 11 - «Մտորդութեանց» մասին
- « 14 - «Երկրորդ Վերլուծական»ին մասին

Հատոր Բ - «Զգացականներու» (մարմնեղէններու, բնական մարմիններու) մասին

- Թուղթ 1 - Նիւթի, «տեսակ»ի (ձեւ) ժամանակի եւ տեղի մասին
- « 2 - «Երկնից» եւ մարդու մասին
- « 3 - Լինելութեան եւ ապականութեան մասին
- « 4 - Օղերեւուլթարանական հարցերու մասին
- « 5 - Մետաղներու կազմութեան մասին
- « 10 - Զոլայարանքներու եւ զգայութեանց մասին
- « 12 - «Մարդը մանրանկար աշխարհ մըն է» :

Հատոր Գ - (որ շարունակութիւնն է իր նախորդին)

- Թուղթ 13 - Հոգիի (կամ հոգիներու) ծնունդին մասին
- « 14 - Մարդու ճանաչողական կարողութեանց եւ անոնց սահմաններուն մասին
- « 15 - Կեանքի եւ մահուան մասին

Հատոր Գ - Մաս 2 - «Հոգեղէններու եւ իմացականներու» մասին

- Թուղթ 1 - «Իմացականներու» մասին (Փիւթակոր)
- « 3 - «Աշխարհը խոշոր մարդ մըն է»
- « 4 - «Իմացականութեան եւ իմացականներու» մասին

Հատոր Գ Մաս 3 - «Բարոյագիտական, Աստուածաբանական, եւ կանոնագրական (իրաւաբանական) գիտութեանց» մասին

- Թուղթ 1 - Կրօնական եւ փիլիսոփայական ըմբռնումներու մասին

Հատոր Դ -

- Թուղթ 2 - «Մարդու եւ Երկնից նմանութեան մասին

.....

Կը հաւատանք որ այլեւս կասկածի տեղ չի մնար, եթէ ըսենք թէ Յովհաննէս Պլուզ երգնկացի, իր «Ի Տաճկաց Իմաստասիրաց...»

վախճանական պատճառը (final cause) علت غائية

... Սակայն ամբողջ հատուածը անուանական նմանութեմէ անդին չ'անցնիր. արիստոտէլեան յստակ պատճառներու տեսութիւնը շատ հեռուոր կերպով կրնայ աղբիւր ծառայած ըլլալ «Րասա'էլ»ին: Իսկ Երզնկացիի բացատրութիւնը եւս շփոթ է: Չորս բառերու շուրջ կը դառնայ հեղինակը առանց յստակ գաղափար մը կարեւոր հաղորդելու ըմբերցողին. «ներգործութիւն», «գործօղն», «պատճառն», եւ «նիւթն»: Ընդհանուր գաղափարը վստահաբար ըմբռնած է Երզնկացի, բայց արարելէն բնագրին շփոթը փոխանցուած է իր քարգտնութեանը: Ամբողջ «Ի Տաճկաց Իմաստասիրաց...»ին ամենէն աղօտ հատուածն է հաւանաբար այս մէկը:

աշխատութեան համար որպէս (միակ) աղբիւր ունեցած է «Քասա՛էլ Իխուան ալ-Սաֆա»ն: Կը մնայ յատակացնել այն հարցը թէ Երզնկացին որչափով ծանօթ էր արարերէն լեզուին: Երկու երևույթներ կ'առաջարկեն ընդունիլ այն տեսութիւնը թէ Երզնկացին դիտէր բաւականաչափ, բայց ոչ կատարեալ, արարերէն: Նախ, իր դիւրին, ինքնավստահ եւ ճիշդ դործածութիւնը արարերէն իմաստասիրական եզրաբանութեան, ապա՝ իր ամբողջական հասկացողութիւնը «Քասա՛էլ»ի խրթին դաղափարներուն եւ առհասարակ դպրոցին հիմնական փիլիսոփայական դրութեան: Երզնկացիի ամփոփումը – եթէ կարելի է այսպէս կոչել իր դրքոյիւր, յստակ է, հասկնալի եւ հարազատ իր աղբիւրի ողբին եւ ոճին, պարագայ մը, որ զօրաւոր կերպով կ'առաջարկէ իր ուղղակի, առանց թարգմանի օգնութեան ընթերցումը բնագրին:

«Ի Տաճկաց Իմաստասիրաց...»ը հակառակ իր որոշ չափով թոյլ, անկազմակերպ կառոյցին – պարագայ մը որ կը հաստատէ մեր այն տեսութիւնը թէ անիկա նօթագրութիւններու հաւաքածոյ մըն է, զարմանալիօրէն յստակ եւ ամփոփ դաղափար մը կ'ու տայ «Իխուան ալ-Սաֆա»յի ընդհանուր փիլիսոփայական դրութեան մասին: Երզնկացի դիտումնաւոր կերպով զանց կ'առնէ հեղինակներուն կրօնական, աստուածախօսական, կանոնադրական եւ բարոյագիտական վարդապետութիւնները, որոնք հիմնուած են դերազանցապէս իսլամական աստուածաբանութեան վրայ, նոր-պղատոնական, «Մու՛թաղիլա» եւ խորհրդապաշտ տրամադրութիւններով: Առհասարակ Երզնկացի դուրս կը ձգէ բոլոր այն հատուածները, որոնք իր քրիստոնէական դաւանաբանութեան եւ բարոյագիտական ըմբռնումներուն հետ խոտոր կը համեմատին: Ան կ'անտեսէ նաեւ «Իխուան ալ – Սաֆա»յի գաղտնի, եղբայրակցական, ճգնաւորական եւ հերձուածային բնոյթէն բխած կեանքի փիլիսոփայութիւնը: Աղանդին ընկերային դիրքը (հայածուած խմբակ մը ըլլալու պարագան) նաեւ կը պարտադրէ Երզնկացին լուռ անցնելու «Տաճիկ իմաստասէրներ»ու իսկական ինքնութեան հարցին վրայէն: Սակայն Երզնկացիի ընթերցողը անմիջականօրէն կը զգայ հեղինակին բացայայտ համակրանքը եւ հիացումը հանդէպ՝ «Տաճիկ իմաստասէրներու» գիտութեան եւ ընդհանուր իմաստասիրական սկզբունքներուն եւ դրութեան:

Եզրափակելու համար ըսենք թէ անհրաժեշտ է նոր լոյսի տակ վերատեսութեան ենթարկել Երզնկացիի փիլիսոփայական եւ գիտական դործերը, մասնաւորաբար անոնք, որոնք դրուած են իր՝ Մերձաւոր Արեւելք շրջապոյտէն՝ 1284 թ.էն ետք, երբ ան առիթը ունեցած է շփման մէջ մտնելու «Իխուան ալ – Սաֆա»յի գաղտնասոյց փիլիսոփայութեան հետ «Քասա՛էլ»ին միջոցով: Հետեւաբար,

ներկայ աշխատութիւնը միայն սկզբնաւորութիւն մը կրնայ նկատուիլ, ձեռնարկելու շատ աւելի խորունկ եւ ընդարձակ ուսումնասիրութեան մը, բնորոշելու այս իւրայատուկ փիլիսոփայութեան ազդեցութիւնը Երզնկացիի սեփական փիլիսոփայական եւ գիտական մտածողութեան եւ հետազային, հայ փիլիսոփայութեան զարգացման ուղիներուն վրայ :

**THE SOURCE OF HOVHANNES BLOOZE OF ERZINKA'S
"VIEWS FROM THE WRITINGS OF ISLAMIC
PHILOSOPHERS"**

SETA BARSOUMIAN-DADOYAN

(Summary)

Hovhannes Blooze of Erzinka is a thirteenth century author and philosopher of very wide learning. Besides his numerous sermons, theological and philosophical treatises, Blooze has a brief study called "Views From the Writings of Islamic philosophers". This rather short book is a selection of fragments from "certain" islamic philosophers whose identity he never mentions. His sources had so far remained unknown to historians of Armenian philosophy.

The main objective of the present paper is to establish the theory (by way of specific references) that the "Views..." is a selective summary of the "Epistles of the Brethren of Purity", (Rasail Ikhuana al-Safa'), a massive encyclopaedic work of four volumes containing 52 epistles or papers. These epistles reflect the basic creed of the Brethren of Purity, who formed a secret communal and fraternal organization, a philosophico-religious society which originated in Basrah in the second half of the tenth century.

The Epistles were an Encyclopaedia of sciences encompassing almost the entire field of human knowledge. Blooze owes to the Brethren much more than it could generally be expected from a summarizer-translator. In fact his later works reveal some influences. However, the extent and precise nature of his relation with this school of thought remains to be studied.